

ՍՏԵՓԱՆ ՌԱՖԻԿԻ ՊԱՊԻԿՅԱՆ



Ստեփան Ռաֆիկի Պապիկյանը ծնվել է 1957 թվականի հուլիսի 9-ին ՌԴ Ալթայի երկրամասի Զալեսովո գյուղում: 1974 թվականին ավարտել է Երևանի թիվ 87 միջնակարգ դպրոցը: Նույն տարում ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը „Ջերմային էլեկտրակայաններ,, մասնագիտությամբ: 1979 թվականին ավարտել է և ստացել ինժեներ ջերմաէներգետիկի որակավորում: Աշխատանքի է անցել էներգետիկայի հայկական գիտահետազոտական ինստիտուտում, որտեղ աշխատել է մինչև 2004 թվականը՝ ինժեներից հասնելով մինչև ավագ գիտաշխատողի պաշտոնին: Տարիներ շարունակ եղել է ինստիտուտի գիտխորհրդի անդամ, արհմիութենական կազմակերպության նախագահ:

1984-ին ընդունվել է Մոսկվայի էներգետիկայի ինստիտուտի ցերեկային ասպիրանտուրա, միաժամանակ աշխատել է ամբիոնում որպես կրտսեր գիտաշխատող: Գիտական աշխատանքներ է կատարել Մոսկվա, Սվերդլովսկ քաղաքների ջերմամատակարարման համակարգերի աշխատանքի արդյունավետության և հուսալիության բարձրացման համար: Աշխատանքները ներդրվել են Մոսկվայի էներգահամակարգում: Ավարտել է դասախոսների վարպետության բարձրացման համալսարանը (ք. Մոսկվա, 1985թ.): Տեխնիկական գիտությունների թեկնածու է: 2004թ.-ից մինչև 2007թ. աշխատել է „Էներգաչափ,, ՓԲԸ որպես լաբորատորայի պետի տեղակալ, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտում որպես խմբի ղեկավար, առաջատար գիտաշխատող: 2007թ.-ից աշխատում է „ԷՌԱ,, ՍՊԸ-ում որպես գլխավոր ինժեներ: 2020թ. ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի առաջատար

գիտաշխատող է: Աշխատել է նաև Քաջարանի պղնձամուլիբդենային կոմբինատում որպես գլխավոր մասնագետ:

Սկսած 1980 թվականից համատեղության կարգով դասախոսական աշխատանք է կատարել պոլիտեխնիկական ինստիտուտում, այնուհետև՝ Բիզնեսի և քաղաքականության ինստիտուտում: Կարդացել է էներգետիկայի և բնապահպանական հարցերի հետ կապված բազմաթիվ առարկաներ („Շոգեզագատուրբինային ՋԷԿ-եր„; „ՋԷԿ-երի պոմպային կայանքներ„; „Այլընտրանքային էներգետիկա„; „էներգետիկայի հիմունքներ„; „Շոգետուրբինային տեղակայանքների շահագործում„; „Մենենջմենթ„; „Էկոլոգիա„; „Տնտեսական աշխարհագրություն„; „Քաղաքացիական պաշտպանություն և արտակարգ իրավիճակներ„; „Բնապահպանության հիմունքներ„, և այլն): Բազմիցս եղել է դիպլոմային և կուրսային աշխատանքների ղեկավար, պետական քննական հանձնաժողովի նախագահ: Նրա ղեկավարությամբ տասնյակ ուսանողներ կատարել և պաշտպանել են դիպլոմային աշխատանքներ, հաջողությամբ աշխատում են էներգետիկայի բնագավառում:

1980թ.Ստ.Պապիկյանին շնորհվել է Խորհրդային Միության պահեստի լեյտենանտի, իսկ հետագայում նաև ավագ լեյտենանտի զինվորական կոչումներ:

1992թ. մշակված Հայաստանի էներգետիկայի զարգացման համալիր ծրագրի հեղինակներից է: 1995թ.մշակված Հայաստանի ջերմամատակարարման համակարգերի զարգացման հայեցակարգի պատասխանատու հեղինակներից է: 1997թ. ընտրվել է էներգետիկ ինժեներների միջազգային ասոցիացիայի անդամ(ԱՄՆ): Մեծ ծավալի աշխատանքներ է կատարել էներգետիկ ինժեներների միջազգային ասոցիացիայի Հայաստանի մասնաճյուղի հիմնադրման և նրա հետագա զարգացման համար: Ստացել է „Վկայագրված էներգետիկ մենեջեր„ միջազգային անվանակոչությունը(ԱՄՆ):

Հեղինակ է շուրջ 300 գիտական աշխատությունների, ինչպես նաև 22 մեծարժեք մենագրությունների, որոնք առընչվում են ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգերի, գազատուրբինային կայանքների, ՋԷԿ-երի և ԱԷԿ-ների, ՀԷԿ-երի, այլընտրանքային էներգետիկայի, էներգախնայողության, կաթսայատների ռեժիմային, էկոլոգիական, ինչպես նաև էներգետիկայի պատմության հարցերին:

2003թ. լույս տեսավ իր բնույթով եզակի „Հայաստանի էներգետիկան մինչև 1920 թվականը„ գիտական աշխատությունը, որտեղ հեղինակը ներկայացնում է Հայաստանի մինչև 1920 թվականը գոյություն ունեցող բոլոր էլեկտրակայանների

մասին պատմագիտական կարևոր տեղեկատվություն և վերլուծություններ: Այն լայն ձևով քննարկվեց նաև մամուլում և մեծ արձագանք ունեցավ մասնագետների շրջանակներում: Ուսումնասիրություններն այս ուղղությամբ շարունակվում են: Գրել է „Հայաստանի էներգետիկայի պատմությունը,, քառհատոր արժեքավոր գիտական մենագրությունը:

1996թ.նրա անմիջական նախաձեռնությամբ հիմնադրվում է „էներգետիկ լրատու,, թերթը: Այն գրանցվեց ՀՀ արդարադատության նախարարությունում և հսկայական դեր կատարեց Հայաստանի և աշխարհի էներգետիկ խնդիրների լուսաբանման համար:

Նրա կողմից մշակվել են ջերմամատակարարման համակարգերի ռեժիմների ուսումնասիրության մի շարք արժեքավոր մեթոդներ, որոնք հնավորություն են տալիս լուծելու բազմաթիվ խնդիրներ հաշվի առնելով էլակետայի տվյալների անորոշությունը և ռեժիմային հարցեր: Մասնավորապես, հիմնավորել է ռեժիմների վերլուծության միջակայքային մեթոդը, որը զգալիորեն հեշտացնում է իրականացնել ինժեներական հաշվարկները, հատկապես շուկայական հարաբերությունների պայմաններում: Գիտական աշխատանքները ներդրվել են Մոսկվայի էներգահամակարգում և բազմաթիվ գիտական և նախագծային կազմակերպություններում:

Մեծ ծառայություններ ունի Հայաստանի էներգահամակարգում գազատուրբինային կայանքների լայնամասշտաբ օգտագործման համար: Դրա փայլուն ապացույցն է Երևանի ՋԷԿ-ի շոգեգազատուրբինային բլոկը և Հրազդանի 5-րդ էներգաբլոկի շահագործումը:

Ս.Պապիկյանի անմիջական նախաձեռնությամբ 2010թ. հիմնադրվել է Հայկական էներգետիկական ակադեմիան, որի հիմնադիր նախագահն է մինչև օրս: Ակադեմիան մեծ ծավալի աշխատանքներ է կատարում գիտաժողովների կազմակերպման, էներգետիկայի բազմաթիվ հարցերի պարզաբանման, էներգախնայողության քաղաքականության և այլ հարցերի շուրջ:

Ավելի քան 300 գիտական զեկուցում է կարդացել միջազգային, նախկին համամիութենական և հանրապետական գիտաժողովների ընթացքում (Երևան, Մոսկվա, Թբիլիսի, Բաթումի, Քութաիսի, Խարկով, Կիև, Մինսկ, Ս.Պետերբուրգ, Խերսոն, Բրյանսկ, Օդեսա, Սվերդլովսկ, Տաշկենդ, Ալմա-Աթա և այլ քաղաքներում): Բազմիցս եղել է թեկնածուական ատենախոսությունների պաշտոնական ընդդիմախոս: Կազմակերպել է գիտաժողովներ նվիրված էներգետիկայի զարգացման

խնդիրներին:Նա ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի տնտեսագիտության ինստիտուտի գիտխորհրդի անդամ է:

2009թ. գիտամանկավարժական բազմամյա և բեղմնավոր գործունեության համար ստացել է Ռուսաստանի բնագիտության ակադեմիայի պրոֆեսորի գիտական կոչում: Հաշվի առնելով նրա հսկայական ծառայությունները էներգետիկայի զարգացման և կրթության բնագավառում նրան շնորհվել է Վերնադսկու անվան ոսկե մեդալ(ք.Մոսկվա), իսկ 2010թ` „Գիտության և կրթության վաստակավոր աշխատող,, պատվավոր կոչում (ք.Մոսկվա):Կատարել է Ախուրյանի Շաքարի գործարանի համար Ջերմային էլեկտրակայանի տեխնիկա-տնտեսական հիմնավորումը 6ՄՎտ հզորությամբ:2020թ. հիմնադրել է „էներգետիկայի ինստիտուտ,, սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը: Այն սկսել է լայն ծավալի աշխատանքներ կատարել էներգետիկայի բնագավառում:

Գիտամանկավարժական բազմամյա և բեղմնավոր գործունեության համար պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ պատվոգրով: „Սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում,, գիտական ժողովածուի խմբագրական խորհրդի անդամ է:

Ս.Պապիկյանը հսկայական աշխատանք է կատարել Հայաստանում, Արցախում, Վրաստանում հիդրոէլեկտրակայանների, հողմաէլեկտրակայանների,ինչպես նաև արևային էլեկտրակայանների նախագծման և կառուցման բնագավառում: Մինչև օրս նրա նախաձեռնությամբ և ղեկավարությամբ նախագծվել և կառուցվել են ավելի քան 80 հիդրոէլեկտրակայաններ:

Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման գործում ունեցած ակնառու ներդրման համար 2017 թվականին ԱՀ նախագահի կողմից պարգևատրվել է Արցախի Հանրապետության պետական պարգևով` „Երախտագիտություն,, մեդալով:Մշակել է Արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման հայեցակարգ:Մշակել է արցախի Հանրապետության էներգետիկայի զարգացման ծրագիր (Արցախի Հանրապետության էներգետիկ ոլորտի զարգացման հայեցակարգ:Մենագրություն: Ավանդադրված է որպես գիտական աշխատանք ՆՁԱԿ-ում,85 էջ,2023թ.ք.Երևան):

Մեծ ծավալի աշխատանքներ է կատարում ՀՀ սահմանամերձ գյուղերում և բնակավայրերում գրադարաններ հիմնելու և գրադարանային ֆոնդերը համալրելու ուղղությամբ: